



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նոր Արտագերս, norartagers.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2020 թվականի թիվ 14

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՅԿԱՅՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ/ ՄԵՅՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ / կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը»՝ ըստ հավելվածի:
 2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքի ղեկավար Խաչատուր Զանազյանին:
 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:
- Ավագանու անդամներ՝ կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՎԴԻՇՅԱՆ ԲԵՆՅԱՄԻՆ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱՍՏԴԻԿ
3. ԹՈՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐԻՐՈՍՅԱՆ ՇԱՀԵՆ
6. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ
7. ԶԱԿՈՅԱՆ ԶԱՐԵ

(Handwritten signatures of the seven council members)



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԶԱՆԱԶՅԱՆ